Հաստատված
Գորիս համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 29-ի թիվ 02-Ա որոշման

Գորիս համայնք

Խոշորացված Գորիս համայնքի գործունեության գերակա ուղղությունները միտված են համայնքի տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, առաջնային և կենսական նշանակության խնդիրների հաղթահարմանը, տարբեր ոլորտների՝ կրթություն, մշակույթ, երիտասարդական հարցեր, տուրիզմ, առաջխաղացմանն ուղղված քաղաքականության մշակմանն ու գործնական քայլերի իրականացմանը: Իրականացվող նախաձեռնությունները բխում են հնգամյա զարգացման ծրագրի նպատակներից և միտված են համայնքի կենսական նշանակության, առաջնային խնդիրների հաղթահարմանը, տնտեսության առաջխաղացմանը, նոր ենթակառուցվածքների, ծառայությունների ստեղծմանն ու բարելավմանը:

1. Համայնքի տնտեսական զարգացմանն ուղղված ընթացիկ ծրագրեր

✓ **Շարունակվում են Գորիսի Դիտակետի և հարակից տարածքի ճանապարհի վերակառուցման աշխատանքները:**

Ծրագիրն իրականացվում է ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2018-2019թթ. բյուջետային ֆինանսավորման ծրագրի շրջանակում/ ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է շուրջ 99մլն ՀՀ դրամ, որից 40 տոկոսը՝ համայնքի ներդրումը:

✓ **Գորիսի կենտրոնական հրապարակի հարակից տարածքի և Մշակույթի տան հարակից ճեմուղին բարեկարգվել է**

Ծրագիրն իրականցվել է ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2018-2019թթ. բյուջետային ֆինանսավորման ծրագրի շրջանակում/ ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 101մլն ՀՀ դրամ, որից 40 տոկոսը՝ համայնքի ներդրումը:

✓ **Գորիս համայնքի Խնձորեսկ գյուղի «Մոտիկ սար» անվանյալ տարածքում սնուցող ջրագծի ջրհավաքի կառուցման աշխատանքներ**

Ծրագիրն իրականցվել է ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2019թ. բյուջետային ֆինանսավորման ծրագրի շրջանակում/ ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 41 850 000 ՀՀ դրամ

✓ **Գորիս համայնքի <<Գորիս քաղաքի թիվ 7 նախադպրոցական ուսումնական հաստատության>> ՀՈԱԿ-ի վերանորոգման աշխատանքներ**

Ծրագիրն իրականցվել է ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2019թ. բյուջետային ֆինանսավորման ծրագրի շրջանակում/ ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 62 796 000 ՀՀ դրամ

✓ **Գորիս համայնքի Գորիս քաղաքի Մաշտոցի փողոցի մի հատվածի /Արցախյան խճուղի-Սարյան փողոց հատված/ ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքներ:**

Ծրագիրն իրականցվել է ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2019թ. բյուջետային ֆինանսավորման ծրագրի շրջանակում/ ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 258594000 ՀՀ դրամ

✓ **Գորիս համայնքի Ակներ գյուղ տանող ներթաղամասային փողոցի մի հատվածի /Արցախյան խճուղի - Ակներ գյուղ/ ասֆալտապատման և Գորիս քաղաքի փողոցների /Մաշտոցի, Անկախության, Գ. Աշոտի, Ա. Բակունցի, Գր. Տաթևացի, Օրբելյանների/ փոսային նորոգման աշխատանքներ :**

Ծրագիրն իրականացվել է ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2019թ. բյուջետային ֆինանսավորման ծրագրի շրջանակում/ ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 143040000 ՀՀ դրամ:

- ✓ **Վերիշեն գյուղի արվեստների կենտրոնի հիմնանորոգման, հարակից այգու բարեկարգման, մոտեցող ճանապարհի ասֆալտապատման շինարարական աշխատանքներ:**

  Ծրագիրն իրականացվել է ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2019թ. բյուջետային ֆինանսավորման ծրագրի շրջանակում/ ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 86 140 000 ՀՀ դրամ:

- ✓ **Հին Վանքի Թափ թաղամասի մայթերի հիմնանորոգման աշխատանքներ:**

  Նախկինում դրանք անխնամ էին, մայթերի երկայնքով այգիներ էին և կրպակներ: Այժմ շինարարական բուռն աշխատանքներ են ծավալվում՝ տարածքը վեր է ածվելու հանգստի գեղեցիկ գոտու / ծրագրի ընդհանուր բյուջեն կազմել է 20մլն ՀՀ դրամ/:

- ✓ Խնձորեսկ բնակավայրում հիմնանորոգվել է կենտրոնական հրապարակը, ասֆալտապատվել են հարակից տարածքներն ու բնակավայր մտնող հիմնական ճանապարհը շուրջ 24 մլն ՀՀ դրամ

- ✓ Սյունիքի 14 բազմաբնակարան շենքի բակի հիմնանորոգում և ասֆալտապատում՝ շուրջ 30մլն ՀՀ դրամ:

- ✓ **Գորիս համայնքն անցնում է լուսավորման էներգաարդյունավետ կառավարման՝ նպատակ ունենալով էներգաարդյունավետության բարձրացման միջոցով խնայել էներգիան և կրճատել ջերմոցային գազերի արտանետումներ**

  Գորիս քաղաքի լուսավորության ցանցն ունի 1556 լուսատու: Համայնքի ղեկավարի հանձնարարականով անցյալ տարվանից խնդիր է դրվել առկա էներգատար լուսատուները փոխարինել ժամանակակից, էներգաարդյունավետ և ավելի երկարակյաց լուսատուներով, որոնք աշխատում են լուսարձակման բարելավված ցուցանիշներով օժտված լուսադիոդներով: Արդեն փոխարինվել են 420 լուսատուներ: Պլանավորվում է մինչև տարվա վերջ բարելավել ամբողջ ցանցը: Լուսատուների փոխարինումը լուսադիոդային լուսատուներով առկա 250 վատի փոխարեն կծախսի 20 վատ էներգիա, որն արդեն մի քանի անգամ կնվազեցնի էներգածախսատարությունը՝ ծախսը կրճատելով 60 տոկոսով: Կկրճատվեն ոչ միայն շահագործման, այլ նաև ընթացիկ սպասարկման ծախսերը՝ հաշվի առնելով, որ լուսադիոդային լուսատուներն ունեն կյանքի երկարաժամկետ տևողություն: Համայնքում իրականացվող կապիտալ շինարարության արդյունքում լուրջ ուշադրություն է դարձվում նաև քաղաքի արտաքին տեսքի բարելավմանը: Գոյություն ունեցող մալուխային ցանցը անց է կացվում ստորգետնյա խրամուղիներով: Առաջիկայում պլանավորվում է քայլեր ձեռնարկել քաղաքի գեղարվեստական լուսավորության ապահովման ուղղությամբ՝ ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ նպաստել երեկոյան Գորիսի լուսային հետաքրքիր էֆեկտների մեխանիզմի ներդրմանը:

- ➢ Համայնքում իրականացվող ներդրումային ծրագրերը
  - ✓ Գորիսի համայնքապետարանի, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի, շվեյցարացի բարերարների համատեղ ջանքերով հիմնանորոգվում է Գորիսի ֆուտբոլի դաշտը, կառուցվում է ևս մեկ դաշտ և մարզադահլիճ: Գորիսում հիմնվում է ֆուտբոլային ակադեմիա: Համագործակցության մեկնարկը տրված է, ֆինանսավորումը՝ հաստատված, շինաշխատանքները՝ սկսված:

- ✓ Գորիսում բացվում է երկրորդ սպորտդպրոցը: Ընթացքի մեջ են դահլիճի նորոգման աշխատանքները: Համագործակցության արդյունքում ձեռք է բերվել անհրաժեշտ մարզագույքը:
- ✓ Գորիսի համայնքապետարանի, քույր քաղաք Վիենի և «Քոնթուր Գլոբալ» ընկերության հետ համատեղ ջանքերով և համաներդրումային ծրագրով Գորիսում հիմնանորոգվել է Հին Գորիս գյուղի քարանձավներից մեկը:

Համայնքի բնակավայրերում իրականացված և ընթացիկ ծրագրեր

- Բնակավայրերում շարունակվում են առաջնային, հրատապ լուծում պահանջող խնդիրների լուծման աշխատանքները: Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, փոսալցում, եզրաքարերի կառուցում, կոյուղագծերի անցկացում
- Վերիշենում իրականացվել են փոսալցման, ճանապարհների բարեկարգման աշխատանքներ:
- Խնձորեսկ բնակավայրում հիմնանորոգվել է կենտրոնական հրապարակը, ասֆալտապատվել են հարակից տարածքներն ու բնակավայր մտնող հիմնական ճանապարհը
- Գորիս քաղաքի գլխավոր աղբավայրը ցանկապատվել է
- Ներքին Խնձորեսկում իրականացվում է չրանոցի վերականգնման ծրագիր
- Գորիսի կենտրոնական հրապարակում շարժական արվեստանոցներ են ստեղծվում՝ վերնիսաժի գաղափարի իրականացման նպատակով, տաղավարներն արդեն ձեռք են բերվել
- Բարձրավանում համայնքային նախաձեռնող խմբի միջոցով իրականացվում է էկո տուրիզմի ծրագիր, լճի հարակից տարածքում տեղադրվում են փայտե 2 տաղավարներ, ձեռք են բերվել քնապարկեր, վրաններ
- Հարթեցվել են նաև Ներքին Խնձորեսկ բնակավայրի տարբեր թաղամասեր տանող ճանապարհները:
  - ✓ Համայնքի բնակավայրերում անցած ամիսներին շարունակվել են մաքրման ընթացիկ մեծածավալ աշխատանքները: Անանցանելի մայթերն ու փողոցները բարեկարգ տեսքի են բերվել: Հեռացվել են ավազակույտերը, ավելորդ թափոնները: Մայթերը հարթեցվել են, բարեկարգ տեսքի բերվել: Մաքրվել է դեպի Ներքին Խնձորեսկ տանող ճանապարհին գտնվող աղբանոցը:
  - ✓ Բարելավվել են Վերիշեն, Քարահունջ բնակավայրերի՝ դեպի այգիներ տանող ճանապարհները
  - ✓ Որոտանում, Վերիշենում, Քարահունջում իրականացվել են ոռոգման համակարգի բարելավման ծրագրեր
  - ✓ Վերիշեն, Ակներ , Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ և Հարթաշեն բնակավայրերի մութ փողոցների իրավիճակն արմատապես փոխվել է: Համայնքի համաչափ զարգացման համատեքստում, ապահովվել է վերոնշյալ բնակավայրերի լուսավորությունը: Գորիսի համայնքապետարանը մշակել է նաև էներգոխնայողության ռազմավարական ծրագիր, որի արդյունքում նախատեսվում է համայնքում ծախսվող էլեկտրաէներգիայի 30% խնայողություն:
- **2019թ.ին նախատեսված աշխատանքների ծավալներն ու ֆինանսական ներդրումները բազմապատկվել են: Մի շարք ծրագրեր հաստատվել են, որոշները ընթացիկ են, նաև՝**

պլանավորման փուլում: Այսպիսով՝ 2019թ. Գորիս համայնքում հաստատված և պլանավորվող ծրագրերն են

- Բազմաբնակարան շենքի կառուցում՝ 15 ընտանիքի համար
- Բազմաբնակարան շենքերի բակերի նորոգում Գորիս գյուղ տանող ճանապարհի ասֆալտապատում
- Խնձորեսկ բնակավայրում ավարտին կհասցվեն կապտաժի կառուցման աշխատանքները, խմելու ջրի հարցը վերջնական լուծում կստանա
- Վերիշեն բնակավայրում կապտաժների կառուցում
- Համայնքում գործող թանգարանների և պատկերասրահի, մշակութային հաստատությունների աշխատանքների բարելավման նպատակով՝ մշակվել է նոր ծառայությունների փաթեթ, իրականացվել և պլանավորվում են գույքի և տեխնիկական միջոցների վերազինման աշխատանքներ:
- 2019թ. համայնքում կազմակերպվել են թվով 178 մշակութային և սպորտային միջոցառումներ, այդ թվում փառատոններ, մրցույթներ:
- Նուհ-երում սննդի կալորիականությունը բարձրացվել է, ճաշացանկում ավելացվել են 14 անուն նոր սննդատեսակ: Երեխաները սնվում են օրական 3 անգամ, ճաշից առաջ տրվում են մրգեր կամ հյութեր:
- Նուհ-երի միջին և ավագ խմբերի թվով 644 երեխաների համայնքապետարանի կողմից տրամադրվել են գրենական պիտույքներից բաղկացած փաթեթներ:
- Համայնքապետարանի Մշակույթի, կրթության բաժնի կողմից իրականացվում է երեխաների ամենօրյա հաշվառում
- Մշտապես վերահսկվում են մանկապարտեզների սանիտարահիգիենիկ վիճակը, ջերմաստիճանային ռեժիմը, սննդի պատշաճ պահպանումը, ճաշացանկը, ռեժիմային պահերի իրականացումը
- 2019թ.-ի սեպտեմբերին ՆՈՒՀ-ից հանրակրթական դպրոց ենք ճանապարհել 324 երեխա
- Անցած տարվա համեմատ ավելացել է երեխաների հաճախումների թիվը /դեկտեմբերին՝ 1150 երեխա/
- Բարձրացել է նախադպրոցական կրթական ծառայությունների մատչելիությունն ու որակը, որը արդյունք է նոր ծրագրերի իրականացման
- ՆՈՒՀ-երի 70 մանկավարժների համար Գորիս համայնքում կազմակերպվել են վերապատրաստման 3-օրյա դասընթացներ՝ Կրթության ազգային ինստիտուտի մասնագետների կողմից
- Գորիսի մանկապարտեզի մտզադպրոցի և ՆՈՒՀ-երի բուժքույրերը մասնակցել են «Ազգային Բժշկական Պալատի» կողմից Գորիս համայնքում կազմակերպված «Քույրական գործընթացն անհետաձգելի իրավիճակներում» թեմայով գիտագործնական սեմինարին
- ՆՈՒՀ-երը ապահովվել են անհրաժեշտ ծրագրամեթոդական գրականությամբ, համակարգչով, տպիչով